Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓՈՐՁԱԳԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Գյումրի

04. հոկտեմբերի 2019թ.

Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Ա.Գյոզալյանս, քննարկելով վարույթիս թիվ 28101319 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի ապրիլի 18-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Արթիկ քաղաքի բնակիչներ Արթուր Արսենի Սարգսյանը, անչափահասներ՝ 02.04.2002 թվականին ծնված Արման Արտակի Ռեհանյանը և 02.07.2002 թվականին ծնված Լյովա Դավիթի Մանուկյանը, Արթիկ քաղաքի բնակչուհի Էլմիրա Վանյայի Յուզբաշյանին պատկանող՝ նույն քաղաքի Պարույր Սևակ փողոցի 14-րդ տանից զգալի չափերի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, նախապես իրենց հետ վերցրած ծալովի դանակով և ամրանով պատուհանը բացելու եղանակով՝ ապօրինի մուտք են գործել հիշյալ բնակարան և ննջասենյակներից ու հյուրսենյակից փորձել են գողանալ զգալի չափերի՝ ընդհանուր 250.000 ՀՀ դրամ արժողության գույք՝ 30.370 ՀՀ դրամ կանխիկ գումար, ոսկյա շղթա կուլոնով, 2 հատ տղամարդու ժամացույց, մեկ հատ կանացի ժամացույց, մեկ հատ տղամարդու պարզազարդ վզնոց, մեկ հատ տղամարդու պարզազարդ մատանի, մեկ հատ կանացի պարզազարդ մատանի, մեկ հատ համրիչ, մեկ հատ էլեկտրահարող խաղալիք, մեկ շիշ ,,Մարտինի,, տեսակի ոգելից խմիչք, մեկ հատ սպիներ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չեն հասցրել, այն է՝ դեպքի վայրում հանցագործություն կատարելու պահին հայտնաբերվել և բռնվել են ոստիկանության Արթիկի բաժնի ծառայողների կողմից:

Դեպքի առթիվ 2019 թվականի ապրիլի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 28101319 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում կատարվել են բազմաթիվ քննչական և դատավարական գործողություններ և կատարված նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա հանցագործությունը կատարած անձանց առաջադրվել են մեղադրանքներ:

2019 թվականի ապրիլի 25-ին, Արթուր Արսենի Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ուրիշի գույքի խոշոր չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2019 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Արթիկ քաղաքի անչափահաս բնակիչներ Արման Արտակի Ռեհանյանի և Լյովա Դավիթի Մանուկյանի հետ նախնական համաձայնության գալով, օգտվելով Մաթևոս Ժորայի Կեզացյանին պատկանող Արթիկ քաղաքի Կոմերիտմիության փողոցի 32-րդ հասցեում գտնվող տանը մարդ չլինելու հանգամանքից, միջանցքի պատուհանը բացելով և ապօրինի մուտք գործելով բնակարան՝ գողացել են խոշոր չափերի՝ ընդհանուր 700.000 ՀՀ դրամ արժողության գույք՝ 3 հատ <<Սամսունգ>> մոդելի, մեկ հատ ,,Ալկատել,, մոդելի և մեկ հատ <<Մոտորոլա>> մոդելի բջջային հեռախոսներ, երկու հատ էլեկտրական ծխախոտեր, մեկ հատ <<Սամսունգ>> տեսակի պլանշետ, նոութբուք, մեկ շիշ << Հայուհի>> տեսակի և մեկ շիշ << Տիգրիս>> տեսակի կոնյակ, մեկ շիշ կիսաչոր շամպայն, մեկ շիշ լիկյոր, մեկ հատ 3D ակնոց, մեկ հատ <<Պանասոնիկ>> տեսակի թվային վիդեոնկարահանող ֆոտոխցիկ, կանացի օծանելիք, բարձրախոս, <<Սամսունգ>> տեսակի հեռուստացույց և համակարգիչ իր բոլոր աքսեսուարներով:

Դրանից հետո, Արթուր Սարգսյանն ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2019 թվականի ապրիլի 18-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Արթիկ քաղաքի անչափահաս բնակիչներ Արման Արտակի Ռեհանյանի և Լյովա Դավիթի Մանուկյանի հետ նախնական համաձայնության գալով և մտածելով, որ Էլմիրա Վանյայի Յուզբաշյանին պատկանող Արթիկ քաղաքի Պարույր Սևակ փողոցի 14-րդ տանը վերջինս քնած է, իրենց ոչ ոք չի նկատի

գողություն կատարելիս, իրենց հետ նախապես վերցրած ծալովի դանակով և ամրանով պատուհանը բացելու եղանակով՝ ապօրինի մուտք են գործել հիշյալ բնակարան և ննջասենյակներից ու հյուրսենյակից փորձել են գողանալ զգալի չափերի՝ ընդհանուր 250.000 ՀՀ դրամ արժողության գույք՝ 30.370 ՀՀ դրամ կանխիկ գումար, ոսկյա շղթա կուլոնով, 2 հատ տղամարդու ժամացույց, մեկ հատ տղամարդու պարզազարդ վզնոց, մեկ հատ տղամարդու պարզազարդ մատանի, մեկ հատ համրիչ, մեկ հատ էլեկտրահարող խաղալիք, մեկ շիշ ,,Մարտինի,, տեսակի ոգելից խմիչք, մեկ հատ սպիներ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չեն հասցրել, այն է՝ դեպքի վայրում հանցագործություն կատարելու պահին հայտնաբերվել և բռնվել են ոստիկանության Արթիկի բաժնի ծառայողների կողմից:

Մեղադրյալի դատավարական կարգավիճակում Արթուր Արսենի Սարգսյանը տվել է խոստովանական ցուցմունք, միաժամանակ հայտնել, որ առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կատարածի համար:

2019 թվականի ապրիլի 25-ին, Արման Արտակի Ռեհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2019 թվականի մարտի 15-ին, ժամը 13-ի սահմաններում, օգտվելով Էլմիրա Վանյայի Յուզբաշյանին պատկանող Արթիկ քաղաքի Պարույր Սևակ փողոցի 14-րդ տանը մարդ չլինելու և հյուրասենյակի պատուհանի փեղկի կիսաբաց լինելու հանգամանքից, փատուհանի փեղկը ամբողջությամբ բացելու եղանակով, ապօրինի մուտք է գործել բնակարան և գողացել զգալի չափերի՝ 15.000 ՀՀ դրամ կանխիկ գումար պարունակող դրամապահոցը:

Բացի այդ, Արման Ռեհանյանն ուրիշի գույքի խոշոր չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2019 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Արթիկ քաղաքի բնակիչներ Արթուր Արսենի Սարգսյանի և Լյովա Դավիթի Մանուկյանի հետ նախնական համաձայնության գալով, օգտվելով Մաթևոս Ժորայի Կեզացյանին պատկանող Արթիկ քաղաքի Կոմերիտմիության փողոցի 32-րդ հասցեում գտնվող տանը մարդ չլինելու հանգամանքից, միջանցքի պատուհանը բացելով և ապօրինի մուտք գործելով բնակարան՝ գողացել են խոշոր չափերի՝ ընդհանուր 700.000 ՀՀ դրամ արժողության գույք՝ 3 հատ <<Սամսունգ>> մոդելի, մեկ հատ ,,Ալկատել,, մոդելի և մեկ հատ <<Մոտորոլա>> մոդելի բջջային հեռախոսներ, երկու հատ էլեկտրական ծխախոտեր, մեկ հատ <<Սամսունգ>> տեսակի պլանշետ, նոութբուք, մեկ շիշ << Հայուհի>> տեսակի և մեկ շիշ << Տիգրիս>> տեսակի կոնյակ, մեկ շիշ կիսաչոր շամպայն, մեկ շիշ լիկյոր, մեկ հատ 3D ակնոց, մեկ հատ <<Պանասոնիկ>> տեսակի թվային վիդեոնկարահանող ֆոտոխցիկ, կանացի օծանելիք, բարձրախոս, <<Սամսունգ>> տեսակի հեռուստացույց և համակարգիչ իր բոլոր աքսեսուարներով:

Դրանից հետո, Արման Ռեհանյանն ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2019 թվականի ապրիլի 18-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Արթիկ քաղաքի բնակիչներ Արթուր Արսենի Սարգսյանի և Լյովա Դավիթի Մանուկյանի հետ նախնական համաձայնության գալով և մտածելով, որ Էլմիրա Վանյայի Յուզբաշյանին պատկանող Արթիկ քաղաքի Պարույր Սևակ փողոցի 14-րդ տանը վերջինս քնած է, իրենց ոչ ոք չի նկատի գողություն կատարելիս, իրենց հետ նախապես վերցրած ծալովի դանակով և ամրանով պատուհանը բացելու եղանակով՝ ապօրինի մուտք են գործել հիշյալ բնակարան և ննջասենյակներից ու հյուրսենյակից փորձել են գողանալ զգալի չափերի՝ ընդհանուր 250.000 ՀՀ դրամ արժողության գույք՝ 30.370 ՀՀ դրամ կանխիկ գումար, ոսկյա շղթա կուլոնով, 2 հատ տղամարդու ժամացույց, մեկ հատ տղամարդու պարզազարդ վզնոց, մեկ հատ տղամարդու պարզազարդ մատանի, մեկ հատ համրիչ, մեկ հատ էլեկտրահարող խաղալիք, մեկ շիշ ,,Մարտինի,, տեսակի ոգելից խմիչք, մեկ հատ սպիներ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չեն հասցրել, այն է՝ դեպքի վայրում հանցագործություն կատարելու պահին հայտնաբերվել և բռնվել են ոստիկանության Արթիկի բաժնի ծառայողների կողմից:

Մեղադրյալի դատավարական կարգավիճակում Արման Արտակի Ռեհանյանը տվել է խոստովանական ցուցմունք, միաժամանակ հայտնել, որ առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կատարածի համար:

2019 թվականի ապրիլի 25-ին, Լյովա Դավիթի Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ուրիշի գույքի խոշոր չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2019 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Արթիկ քաղաքի բնակիչներ Արման Արտակի Ռեհանյանի և Արթուր Արսենի Սարգսյանի հետ նախնական համաձայնության գալով, օգտվելով Մաթևոս Ժորայի Կեզացյանին պատկանող Արթիկ քաղաքի Կոմերիտմիության փողոցի 32-րդ հասցեում գտնվող տանը մարդ չլինելու հանգամանքից, միջանցքի պատուհանը բացելով և ապօրինի մուտք գործելով բնակարան՝ գողացել են խոշոր չափերի՝ ընդհանուր 700.000 ՀՀ դրամ արժողության գույք՝ 3 հատ <<Սամսունգ>> մոդելի, մեկ հատ ,,Ալկատել,, մոդելի և մեկ հատ <<Մոտորոլա>> մոդելի բջջային հեռախոսներ, երկու հատ էլեկտրական ծխախոտեր, մեկ հատ <<Սամսունգ>> տեսակի պլանշետ, նոութբուք, մեկ շիշ << Հայուհի>> տեսակի և մեկ շիշ << Տիգրիս>> տեսակի կոնյակ, մեկ շիշ կիսաչոր շամպայն, մեկ շիշ լիկյոր, մեկ հատ 3D ակնոց, մեկ հատ <<Պանասոնիկ>> տեսակի թվային վիդեոնկարահանող ֆոտոխցիկ, կանացի օծանելիք, բարձրախոս, <<Սամսունգ>> տեսակի հեռուստացույց և համակարգիչ իր բոլոր աքսեսուարներով:

Դրանից հետո, Լյովա Մանուկյանն ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2019 թվականի ապրիլի 18-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Արթիկ քաղաքի բնակիչներ Արման Արտակի Ռեհանյանի և Արթուր Արսենի Սարգսյանի հետ նախնական համաձայնության գալով և մտածելով, որ Էլմիրա Վանյայի Յուզբաշյանին պատկանող Արթիկ քաղաքի Պարույր Սևակ փողոցի 14-րդ տանը վերջինս քնած է, իրենց ոչ ոք չի նկատի գողություն կատարելիս, իրենց հետ նախապես վերցրած ծալովի դանակով և ամրանով պատուհանը բացելու եղանակով՝ ապօրինի մուտք են գործել հիշյալ բնակարան և ննջասենյակներից ու հյուրսենյակից փորձել են գողանալ զգալի չափերի՝ ընդհանուր 250.000 ՀՀ դրամ արժողության գույք՝ 30.370 ՀՀ դրամ կանխիկ գումար, ոսկյա շղթա կուլոնով, 2 հատ տղամարդու ժամացույց, մեկ հատ տղամարդու պարզազարդ վզնոց, մեկ հատ տղամարդու պարզազարդ մատանի, մեկ հատ համրիչ, մեկ հատ էլեկտրահարող խաղալիք, մեկ շիշ ,,Մարտինի,, տեսակի ոգելից խմիչք, մեկ հատ սպիներ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չեն հասցրել, այն է՝ դեպքի վայրում հանցագործություն կատարելու պահին հայտնաբերվել և բռնվել են ոստիկանության Արթիկի բաժնի ծառայողների կողմից:

Մեղադրյալի դատավարական կարգավիճակում Լյովա Դավիթի Մանուկյանը տվել է խոստովանական ցուցմունք, միաժամանակ հայտնել, որ առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կատարածի համար:

03.05.2019 թվականին քրեական գործով նշանակվել է սննդային, դատանյութագիտական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի եզրակացությունը դեռևս չի ստացվել:

09.09.2019 թվականին «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից հիշյալ փորձաքննության վերաբերյալ ստացվել է միջնորդություն, որով հայտնվել է, որ հաշվի առնելով ՊՈԱԿ-ում «թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, միներալների, հանքային ապարների հետազոտություն» ենթատեսակով համապատասխան փորձագետի /գեմոլոգ/ բացակայությունը, անհրաժեշտ է փորձաքննության կատարմանը ներգրավել համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ «թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, միներալների, հանքային ապարների հետազոտություն» ենթատեսակով համապատասխան մասնագետ է հանդիսանում 08.06.1971թ. ծնված, Արտակ Կասյայի Մովսեսյանը /անձնագիր՝ AN 0719919/, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով, 85-րդ հոդվածի 1-ին մասով և 249-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. 28101319 քրեական գործով Արտակ Կասյայի Մովսեսյանին սննդային, դատանյութագիտական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննության իրականացման համար նշանակել փորձագետ:

2. Փորձագետ նշանակված Ա.Կ.Մովսեսյանին հանձնել սննդային, դատանյութագիտական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշումը, բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ավագ քննիչ **Ա.Ա.Գյոզալյան**